Հաստատված է ԵՊԲՀ ռեկտորատի
թիվ 03 20.09.12 նիստում

Ընթացակարգ
Ուսանողների գիտելիքների գնահատման
համակարգի գնահատման

Գնահատման գործիքը	Ուսանողի գիտելիքների գնահատման համակարգի գնահատում հարցաթերթային հարցման միջոցով (հարցաթերթը կցվում է)
Նպատակը	Որքանո՞վ են ուսանողները և դասախոսները բավարարված համալսարանում գործող ուսանողների գիտելիքների գնահատման համակարգից
Որոշումներ կայացնելու կարգը	Եթե գործող համակարգից գոհ են ուսանողների 2/3-ը, ապա համակարգը չի փոփոխվում Եթե դժգոհում են 50%- ից ավելին, ապա մշակվում և հարցաթերթի միջոցով առաջարկվում են գնահատման նոր տարբերակներ, ինչպես նաև քննարկվում են ուսանողների և դասախոսների կողմից առաջարկվող տարբերակները
Ընթացակարգը	Տարեկան 1 անգամ (ուսանողական տարվա ավարտին) մարտ-ապրիլ ամիսներին, ուսանողների և դասախոսների շրջանում անցկացվում է հարցում: Հարցաթերթը մշակվում է որակի ապահովման կենտրոնի կողմից և քննարկվում է որակի գնահատման և ապահովման ֆակուլտետային հանձնաժողովներում: Հարցումը կատարվում է ֆակուլտետային որակի գնահատման և ապահովման հանձնաժողովների կողմից: Վերլուծությունն անց է կացնում համալսարանի որակի ապահովման կենտրոնը: Արդյունքների քննարկմանը մասնակցում են և՛ ուսանողները, և՛ դասախոսները: Վերլուծության, քննարկման և առաջարկությունների փաթեթը դրվում է համալսարանի կայքում՝ որակի ապահովման կենտրոնի էջում: Առաջարկված բարեփոխումները մշակվում են և նոր համակարգը դրվում է կայքում: Մեկ ամիս հետո կրկնակի հարցման արդյունքում այն կիրառվում է հաջորդ ուսումնական տարվանից:

Ընթացակարգի պլանավորում – իրականացում – ստուգում - բարելավում մոդելի ժամանակացույց

փուլերը	**գործողություն**	**պատասխանատու**	**ժամանակահատված**
Պլանավորում	Գործողությունների պլանի մշակում Հարցաթերթիկի մշակում	Բուհ-ի որակի գնահատման և ապահովման կենտրոն	Դեկտեմբեր
Իրականացում	Հարցաթերթիկային հարցման անցկացում	Ֆակուլտետային որակի գնահատման և ապահովման հանձնաժողովներ	Մարտ-ապրիլ
Ստուգում-վերլուծություն	Տվյալների մշակում, վերլուծություն Վերլուծության արդյունքների քննարկում ուսանողների և դասախոսների հետ	Բուհ-ի և ֆակուլտետային որակի ապահովման հանձնաժողովներ	Մայիս
Բարելավում	Գնահատման նոր համակարգի ստեղծում կամ գործող համակարգում փոփոխությունների մշակում	Բուհ-ի որակի ապահովման կենտրոն	Հունիս-հուլիս